Սամվել ԱՎԵՏԻՍՅԱՆ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

1978 թ. գերազանցությամբ ավարտել է ՀԳԻ տնտեսագիտական ֆակուլտետը, աշխատել արտադրությունում և սովորել ասպիրանտուրայում: 1990 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի, 2003 թ.՝ դոկտորի գիտական աստիճան, 2007 թ.՝ պրոֆեսորի գիտական կոչում: 1999 թ. ընտրվել է ՀՀ ԱԺ պատգամավոր: 2002-2011 թթ. աշխատել է ՀՀ գյուղատնտեսության նախարարի առաջին տեղակալ: 2013 թ.-ից առ այսօր աշխատում է ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնում՝ զբաղեցնելով տնօրենի և սոցիալ-տնտեսական ծրագրերի համակարգողի պաշտոնները: Ներկայում պաշտոնավարում է որպես ավագ փորձագետ: Հեղինակ է շուրջ 140 գիտական հոդվածների, 16 մենագրությունների և ուսումնական ձեռնարկների:

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԹԱՆՆԵՐՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Հիմնաբառեր. *կորոնովիրուս, գյուղատնտեսություն, պարեն, անվտանգություն, արտակարգ դրություն, աջակցություն*

Կորոնովիրուսի համավարակն արագ տեմպերով տարածվում է աշխարհի ավելի քան 200 երկրում: Հայաստանում նույնպես մեծանում է վարակակիրների թիվը, և պաշտոնապես արտակարգ դրություն է հայտարարվել: Այս ոչ բնականոն իրավիճակում ամենաապահով ու, պարենային անվտանգության առումով, ամենակարևոր ոլորտը գյուղատնտեսությունն է, որի զարգացումը խթանելու համար անհրաժեշտ է իրականացնել պետական աջակցության արտակարգ միջոցառումներ: Այս հոդվածում նշվում են այդ միջոցառումների ուղղությունները և դրանց իրականացման կառուցակարգերը: Կարևորվում են նաև ՀՀ կառավարության 2020 թ. մարտի 26-ի որոշումները, որոնք բազմակողմանի աջակցություն են նախատեսում գյուղատնտեսության զարգացման համար: Միաժամանակ, ներկայացվում են կարևոր առաջարկություններ այդ միջոցառումների կառուցակարգերի կատարելագործման և կազմակերպման արդյունավետության մակարդակի բարձրացման նպատակով:

Կորոնովիրուսի համավարակի արագ տարածումը մեկ անգամ ևս վկայում է, որ աշխարհը «փոքրացել է»: Հաղորդակցության միջոցների «հեղեղի» պայմաններում, 2019 թ. դեկտեմբերի վերջին, սկիզբ առնելով Չինաստանի Հուբեյ նահանգի կենտրոնից՝ Ուհանից, 2020 թ. մարտի վերջին COVID-19 վարակն արդեն տարածվել է աշխարհի ավելի քան 200 երկրում: Այն հարկադրել է դադարեցնել արտադրական ու սպասարկման ոլորտների բազմաթիվ կազմակերպությունների աշխատանքը, նպաստել միջազգային շուկայում նավթի գնի սրընթաց անկմանը, ԱՄՆ դոլարի համեմատությամբ՝

ազգային դրամի արժեզրկմանը, բնակչության տնտեսական ակտիվության կտրուկ նվազմանը, ներքին և արտաքին առևտրի կրճատմանը: Ամենառիսկայինն այն է, որ դժվար է կանխատեսել այս արհավիրքի ավարտը, որը փլուզում է համաշխարհային տնտեսությունը և հղի է սոցիալ-տնտեսական ծանր հետևանքներով: Աշխարհի շատ երկրներում, որոնց պատուհասել է COVID-19 վիրուսը, հայտարարվում է արտակարգ դրություն, որի պայմաններում առաջնային են դարձել.

1. վարակակիրների հայտնաբերումը, մեկուսացումը, օպերատիվ ախտորոշումը և դեռևս նոր կորոնովիրուսի պատվաստանյութի բացակայության պայմաններում հասանելի միջոցներով բուժումը,

2. բնակչության տեղաշարժի սահմանափակման ու մեկուսացման պայմաններում կենցաղային նվազագույն կարիքների բավարարումը, կրթական, հոգևոր և սոցիալական ծառայությունների մատուցումը:

Նշված հիմնախնդիրներից ամենաառաջնայինը պարենային անվտանգությունն է: Ինչպես հավաստիացնում է արտակարգ դրության պայմաններում գործող պարետատունը, ՀՀ-ում առկա է առաջնային անհրաժեշտության պարենային ապրանքների անհրաժեշտ պաշար, և, ի տարբերություն որոշ երկրների, մեզ մոտ չկա խուճապ, առևտուրն էլ բնականոն է ընթանում: Այդուհանդերձ, քանի որ համաճարակի տևողությունն անկանխատեսելի է, անհրաժեշտ է ձեռնարկել պարենի համալրման կարճաժամկետ ու երկարաժամկետ ծրագրեր: Քանի որ անխուսափելի են դառնում ներկրման դժվարությունները, հարկ է, արտակարգ ծրագրեր իրականացնելով, խթանել գյուղատնտեսության և սննդի արդյունաբերության գործունեությունը, մշտադիտարկել պարենի բաշխման, վաճառքի և գնագոյացման գործընթացները: Այս առումով, հատկանշական է ՀՀ վարչապետ Ն.Փաշինյանի բնորոշումը. «Հատկապես կորոնովիրուսի ճգնաժամի պայմաններում գյուղատնտեսությունը դառնում է ամենակարևոր և հետաքրքիր գործունեության ոլորտներից մեկը: Չնայած միշտ էլ հետաքրքիր է եղել, բայց նոր պայմաններում գյուղատնտեսության կարևորությունն ընդգծվում է մի քանի պատճառներով: Առաջինը՝ պարենային անվտանգության խնդիրները հիմա առավել հրատապություն և կարևորություն են ստանում ոչ միայն Հայաստանի Հանրապետությունում, այլև ողջ աշխարհում: Երկրորդը՝ գյուղատնտեսությունն այն ոլորտն է, որտեղ սոցիալական հեռավորություն պահպանելու առավել նախընտրելի և արդյունավետ հնարավորություններ կան: Երրորդը՝ մենք տեսնում ենք, որ Հայաստանում գյուղատնտեսության ոլորտում նոր աշխատատեղեր ձևավորելու և ինքնազբաղվածություն ապահովելու լայն հնարավորություններ կան: Մասնավորապես՝ կա լքված հողերը կրկին վերադարձնելու հնարավորություն: Եվ չորրորդը՝ կարծում ենք, որ հիմա շատ հարմար ժամանակաշրջան է իրականացնել այնպիսի ինստիտուցիոնալ բարեփոխումներ կամ խթանել ինստիտուցիոնալ բարեփոխումների այնպիսի ընթացք, որ նախկինում օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառներով հնարավոր չէր լինում իրականացնել»[1]: Վարչապետի նախանշած չորրորդ պատճառն առավելապես վերաբերում է գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորման խթանմանը:

Արտակարգ իրավիճակի պայմաններում, երբ խաթարված է տնտեսության բազմաթիվ ոլորտների գործունեությունը, հատկապես գյուղատնտեսությունն ունի էական առավելություններ: Նախ՝ գյուղատնտեսական աշխատանքները պետք է իրականացվեն բնականոն ընթացքով, քանի որ այստեղ գերիշխում է անհատական զբաղվածությունը, և կարելի է նվազագույնի հասցնել միջանձնային շփումներն ու համավարակի տարածման վտանգը: Երկրորդ՝ պարենային ապրանքների արտադրության ավելացման համար առկա են

[1] https://finport.am/full_news.php?id=41282&lang=1

չօգտագործված ռեսուրսներ, որոնք հնարավոր է և պետք է շուտափույթ գործարկել: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է հողային, ջրային ու մարդկային ռեսուրսներին: Ներկայումս հանրապետությունում անմշակ է մնում շուրջ 160 հազ. հա վարելահող, լիարժեքորեն չի օգտագործվում բնական կերահանդակների կեսից ավելին, ոռոգման ջրի կորուստը 50-60 տոկոս է: Եթե դրան ավելացնենք գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության և կենդանիների մթերատվության բարձրացման չօգտագործված հնարավորությունները, ապա, առանց չափազանցության, գյուղատնտեսության համախառն արտադրանքը բնեղեն արտահայտությամբ կարելի է կրկնապատկել: Ինչ վերաբերում է մարդկային ռեսուրսներին, ապա դրանց պակասը զգացվում է հատկապես մեքենայացման ցածր մակարդակ ունեցող և աշխատատար մշակաբույսերի մշակության ոլորտներում: Այստեղ կարևոր ռեսուրս է նաև լիարժեք զբաղվածություն չունեցող քաղաքային բնակչության՝ գյուղատնտեսության ոլորտում ներգրավման հնարավորությունը: ՀՀ անկախության առաջին տարիների փորձը ցույց է տալիս, որ արտակարգ իրավիճակներում քաղաքաբնակ շատ ընտանիքներ հնարավորություն էին գտնում զբաղվելու գյուղատնտեսական գործունեությամբ: Նախ՝ այն քաղաքաբնակները, որոնք գյուղում ունեն հարազատներ, վերջիններիս հետ համագործակցելով, ինչպես նաև վերջիններիս աջակցությամբ, կարող են բավարարել իրենց ընտանիքների պարենի պահանջը: Երկրորդ՝ կարծում ենք, որ ՀՀ կառավարությունն արտակարգ կարգով պետք է ստեղծի համապատասխան իրավական հիմքեր և տեղական ինքնակառավարման մարմիններին հնարավորություն ընձեռի, պահպանելով հողի նկատմամբ սեփականության իրավունքը, երկրից բացակայող հողատերերի տևականորեն չօգտագործվող հողատարածքները վարձակալության հանձնել գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվելու ցանկություն ունեցող քաղաքացիներին, ինչպես նաև արդեն գործող կամ նոր ձևավորվող գյուղատնտեսական կոոպերատիվներին:

Կարծում ենք՝ ՏԻՄ-երը պետք է իրավասություն ստանան ազատ հողերը օգտագործման տրամադրելու՝ առանց ավելորդ վարչական խոչընդոտների, հիմք ընդունելով համայնքի ավագանու որոշումը՝ կնքել հողօգտագործման երկկողմանի պայմանագրեր:

Արտակարգ իրավիճակում ՀՀ կառավարության 2020 թ. մարտի 26-ի նիստում հաստատվել է «Կորոնովիրուսի հետևանքների հակազդման միջոցառումների համապարփակ ծրագիրն ու տնտեսական հետևանքների չեզոքացման միջոցառումները» փաստաթուղթը: Մասնավորապես՝ դրա երկրորդ մասն ամբողջությամբ վերաբերում է գյուղատնտեսությանը՝ նախատեսելով տվյալ ոլորտում կարողությունների զարգացման, ոռոգման արդիական համակարգերի, կարկտապաշտպան ցանցերի ներդրման, խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող արդյունավետ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման, տոհմային տավարաբուծության և ոչխարաբուծության ու այծաբուծության զարգացման, ինչպես նաև ագրովերամշակման ոլորտին գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով վարկերի և գյուղատնտեսական տեխնիկայի ու ագրոպարենային ոլորտի սարքավորումները լիզինգով ձեռք բերելու համար սահմանել 0% տոկոսադրույք: Ընդ որում, կապալառուի միջոցով կառուցվող ջերմատները, սառնարանային և գյուղատնտեսական նշանակության պահեստային տնտեսությունները այսուհետ կարող են դիտարկվել որպես լիզինգի առարկաներ: Կարևորելով խոզաբուծության և թռչնաբուծության ոլորտը՝ նախատեսվող վարկերի համար ոչ միայն սահմանվում է 0% տոկոսադրույք, այլև հնարավորություն է տրվում 30% համաֆինանսավորման գործիքով նվազեցնելու բանկի ռիսկը՝ խթանելով տվյալ գյուղատնտեսական ուղղությունների զարգացումը: Հատկանշական է, որ գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացման համար նույն-

պես սահմանվում են 0% տոկոսադրույքով վարկեր և համաֆինանսավորում, ընդորում, տարբեր նպատակներով վարկերի համար՝ տարբերակված չափաքանակներով: Այս նախագծով նախատեսվում են մինչև 1 մլն դրամի միկրովարկեր՝ 0% տոկոսադրույքով, որը կխթանի գյուղատնտեսության ոլորտում ֆիզիկական անձանց գործունեությունը[2]:

Պետք է խոստովանել, որ սա գյուղատնտեսության աջակցության աննախադեպ ծրագիր է, որը խելամտորեն իրականացնելու պարագայում լավագույն պայմաններ կապահովի ոլորտի զարգացման և երկրի պարենային անվտանգության մակարդակի բարձրացման առումներով: Այո՛, ‹‹խելամտորեն իրականացնելու›› պայմանն առաջնային է, քանի որ նախկինում թույլ տրված սխալների պատճառով բազմաթիվ կարևոր ծրագրեր ակնկալվող արդյունք չեն ապահովել: Համառոտ ներկայացնենք մեր մտավախությունները. նախ՝ ավելի քան մեկ ամիս է, ինչ սկսվել է գյուղատնտեսական տարին, և հատկապես բուսաբուծության ճյուղում մեծ փոփոխություններ կատարելու հնարավորությունները սահմանափակ են: Երկրորդ՝ ինչպես ՀՀ վարչապետն է նշում, կարևոր նախապայման է ծրագրերի վերաբերյալ շահառուներին պատշաճ կերպով իրազեկելը. «Մի պայման կա՝ այս պրոցեսը պետք է լրջորեն ուղեկցվի էկոնոմիկայի, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, ԿԳՄՍ, ինչպես նաև բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունների կողմից: Մենք պետք է մարդկանց հետ քայլենք, զրոյից քայլենք և պետք է բոլոր ազդակներին տեղյակ լինենք: Մարդիկ իմանան, որ իրենց հարցերին, որոնք անխուսափելիորեն ծագելու են, որովհետև սա նոր դաշտ է, պատասխաններ ստանալու են ժամանակին և որակով»[3]: Իհարկե, թվարկելով այս նախարարությունների ցանկը, կառավարությունը չխոստովանեց, որ ակնհայտ են դառնում գյուղատնտեսության նախարարության վերացման և խորհրդատվական համակարգի կայացած կառույցների՝ Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների՝ ըստ էության, լուծարման սխալ քաղաքականության հետևանքները: Կարծում ենք՝ ժամանակն է ուղղել այդ սխալները: Հաջորդ նկատառումը վերաբերում է գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի պետական աջակցության ծրագրին: Մենք ի սկզբանե նշել ենք, որ շահառուների համար այս ծրագրից օգտվելու հիմնական խոչընդոտը 20% կանխավճարի գումարն է: Ուստի առաջարկել ենք առնվազն 50%-ի չափով սուբսիդավորել կանխավճարը:

Պետության օժանդակությամբ կանխավճարի արգելքը հաղթահարելուց հետո՝ ձեռքբերված գյուղատնտեսական տեխնիկան լիզինգառուին լրացուցիչ եկամուտ կբերի, որի շնորհիվ առավել դյուրին կլինի մարել լիզինգի մայր գումարը և տոկոսը[4]:

Ընդհանուր առմամբ, նախատեսված միջոցառումներն ու ծրագրերը օպերատիվ և արդյունավետ կերպով կազմակերպելու համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ քայլերը.

1. ՀՀ վարչապետի գլխավորությամբ ստեղծել Ագրոպարենային ոլորտի աջակցության շտաբ,

2. մարզպետարանների և ՏԻՄ-երի միջոցով օպերատիվ կարգով գույքագրել ազատ վարելահողերի տարածքները, որոշել ոռոգման ջրի ապահովման հնարավորությունը, սերմացուի և տնկանյութի պահանջարկն ու բավարարման ուղղությունները,

3. այն տարածքներում, որտեղ ցանքի ժամկետը դեռևս թույլ է տալիս, առանց հապաղելու կազմակերպել հատապտուղների՝ ազնվամորու, մոշի և այլ տնկիների, եգիպտացորենի, արևածաղկի, գարնանացան հացահատիկի և այլ մշակաբույսերի սերմացուի պակասի ներկրում և ‹‹սերմ վարկի›› սկզբունքով հատկացում երկրա-

[2] https://www.primeminister.am/hy/press-release/item/2020/03/26/Cabinet-meeting-26-03/
[3] Նույն տեղում:
[4] https://asue.am/amberd/publications/possible/areas/of/improvement/lending/program/in/the/republic/of/armenia

գործներին՝ ցանքի և մշակության աշխատանքների համար տրամադրելով արտոնյալ վարկեր,

4. որոշ խոցելի տարածքներում կիրառել «նպաստ աշխատանքի դիմաց»՝ արդեն փորձարկված համակարգը:

Այսպիսով՝ արտակարգ իրավիճակը պահանջում է արտակարգ միջոցառումներ, որոնց հաջողությունը լավագույն նախադրյալ է գյուղատնտեսության ոլորտի զարգացման համար: Կարևոր խնդիր է այդ միջոցառումների իրականացման հասցեականության, թափանցիկության և վերջնարդյունքի գնահատման մշտադիտարկման կառուցակարգերի ապահովումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ավետիսյան Ս., Հայաստանի գյուղատնտեսությունը և ագրովերամշակումը, Եր., «Լիմուշ» հրատարակչություն, 2010, 238 էջ:
2. Հայկազյան Վ., Նոր երկրագործության փիլիսոփայություն, քրեստոմատիա, «Ակտուալ արվեստ», Եր., 2019, 424 էջ:
3. https://finport.am/full_news.

php?id=41282&lang=1
4. https://www.primeminister.am/hy/press-release/item/2020/03/26/Cabinet-meeting-26-03/
5. https://asue.am/amberd/publications/possible/areas/of/improvement/lending/program/in/the/republic/of/armenia

Самвел АВЕТИСЯН
Старший эксперт исследовательского центра АГЭУ «Амберд», доктор экономических наук, профессор

СТИМУЛЫ РАЗВИТИЯ СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА РА В ЧРЕЗВЫЧАЙНОЙ СИТУАЦИИ

Пандемия коронавируса быстро распространяется в более чем 200 странах мира. В Армении также увеличивается число заражённых и официально объявлено чрезвычайное положение. В условиях чрезвычайной ситуации наиболее важной сферой экономики является сельское хозяйство, организация которого более безопасна и обеспечивает продовольственную безопастность страны. Поэтому для стимулирования развития сельского хозяйства должны быть приняты чрезвычайные меры государственной поддержки. В данной статье изложены направления и механизмы реализации этих мер. На заседании правительства РА от 26 марта 2020 года, были приняты важные решения, обеспечивающие всесторонную поддержку для развития сельского хозяйства. В то же время, в статье представлены важные рекомендации по улучшению организации и эффективности этих мероприятий.

Ключевые слова: *коронавирус, сельское хозяйство, продовольствие, безопасность, чрезвычайная ситуация, поддержка*

Samvel AVETISYAN
Senior Expert at ASUE AMBERD Research Center, ASUE, Doctor of Sciences (Economics), Professor

RA AGRICULTURE DEVELOPMENT INCENTIVES IN EMERGENCY SITUATION

The coronavirus pandemic is spreading rapidly in more than 200 countries all around the world. The number of patients in Armenia is also increasing and a state of emergency is officially declared. In an emergency situation, the most important area of the economy is agriculture, the organization of which is safer and provides food security of the country. Therefore, to stimulate the development of agriculture, emergency measures of state support should be taken. This article outlines the directions and mechanisms for the implementation of these measures. At a meeting of the Government of Armenia dated March 26, 2020, important decisions were made to provide comprehensive support for the development of agriculture. At the same time, the article provides important recommendations for improving the organization and effectiveness of these activities.

Keywords: *coronavirus, agriculture, food security, emergency situation, support*